

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 1-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակված Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Մեծի Պահոց» խորհրդի մասին հոգեւից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս» (Ղուկ. ԺԸ 13) բնաբանով:

*
* *

Մարտի 2-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողությունը մեկնում է Ծաղկաձոր՝ չորսօրյա ձմեռային հանգստի:

*
* *

Մարտի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր ըսկըսվում է «Զկարգ Ապաշխարութեան և զԱրևագալի և Ճաշու ժամերգութիւնն», իսկ «Յերեկոյան զԽաղաղականն»:

*
* *

Նույն օրը, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Երևանի օդանավակայանում հայր սուրբին դիմավորում է Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Մարտի 8-ին, կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս» բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով մարդու բարոյական մաքրության անհրաժեշտությունն ու կարևորությունը:

*
* *

Նույն օրը Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը մեկնում է Նյու Յորք՝ մասնակցելու հա-

մար տեղի համալսարանի կողմից կազմակերպված մուսուլմանական ֆենդամենտալիզմի վերաբերյալ լսարանական հավաքին:

*
* *

Մարտի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 15-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ տալով «Անառակ որդու» առակի մեկնությունը:

*
* *

Մարտի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

* *
*

Մարտի 22-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ 2) բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

«Զկնի սրբոյ պատարագի» կատարվում է հոգեհանգիստ՝ Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու վերանորոգության բարերար տիար Գևորգ Քյուրքճյանի տիկնոջ՝ նորոգ հանգուցյալ տիկին Նորմա Քյուրքճյանի հիշատակին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը ցավակցական հեռագիր է ուղարկում Մայր Աթոռի բարերար տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյաններին՝ իրենց հարսի մահվան կապակցությամբ, և տիար Գևորգ Քյուրքճյանին:

*
* *

Մարտի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Լոնդոնից ուխտավորաբար Ս. Էջմիածին է ժամանում Մայր Աթոռի միաբան, Լոնդոնի հայոց Ս. Պետրոս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հայկազուն աբեղ. Նաջարյանը:

Երևանի օդանավակայանում հայր սուրբին դիմավորում է Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

*
* *

Մարտի 26-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի դահլիճում սրտի մասին հետաքրքիր և բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս հայտնի սրտաբան, բժշկական գիտությունների դոկտոր Զավեն Դոլաբջյանը: Վերջում հարգելի դասախոսը պատասխանում է հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողների տված հարցերին:

*
* *

Մարտի 29-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ տալով «Անիրաւ դատաւորի» առակի մեկնությունը:

*
* *

Մարտի 31-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ: